Ներդրումային ծրագիր-առաջարկ

Արվեստի տուն-մշակութային ակումբի հիմնում

_____
(Ներդրումային ծրագրի անվանումը)

Ամփոփ նկարագիր

Ամփոփ նկարագրել ներդրումային ծրագիր-առաջարկը, մասնավորապես՝ ներդրման ոլորտը, արտադրվող ապրանքը կամ տրամադրվող ծառայությունը, հիմնական սպառման շուկաները, ներդրման տեսակը (նոր ձեռնարկություն, գործող ձեռնարկության ընդլայնում, գործող ձեռնարկության վերապրոֆիլավորում), ներդրման համար նախատեսվող /նախընտրելի/ տարածաշրջանը. մարզը, համայնքը: Ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքը, այդ թվում մասնավոր ներդրողի, այլ ներդրողների (եթե կան) ներդրումը և ակնկալվող աջակցությունը:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել Արմավիրի մարզում մշակույթի և զբոսաշրջության զարգացմանը՝ համայնքային զբոսաշրջային գրավիչ վայրերի հայտնաբերման, արդիականացման և ճանաչելիության բարձրացմանը:

Սարգիս Վարդանյանի արվեստի տուն-մշակութային ակումբի ստեղծման գաղափարի հիմքում ընկած է վարպետի՝ տասնամյակների ստեղծագործական ժառանգությունը: Որպես գեղանկարիչ Սարգիս Վարդանյանը տիրապետում էր զարմանալի գունային գամմայի: Վարպետի նկարներում առկա է օդի, լույսի, տարածության անսահման զգացողությունը, որոնք ներդաշնակվելով նրա գունային, կառուցվածքային և ստեղծագործական վարպետության հետ՝ ծնունդ է տվել զարմանահրաշ նկարներ, որոնք բացահայտում են Սարգիս Վարդանյան նկարչի՝ նրբաճաշակ, արտահայտիչ և հեքիաթային աշխարհը:

Նկարչի թողած հսկայական ժառանգությունը պահպանվում է նրա հայրական տան հիմքում կառուցված արվեստանոցում, որը դեռ նկարչի կենդանության օրոք վերածվել է ցուցասրահի:

Ժառանգների նպատակն է արվեստանոցն ընդլայնել և վերածել արվեստի տուն-թանգարանի՝ նկարների ցուցասրահով, զբոսաշրջիկների հյուրընկալության, ժամանցի և հանգստի հնարավորություններով: Նոր ստեղծվող մշակութային օջախը կհանդիսանա մարզի զբոսաշրջային գրավչություններից մեկը, որն ընդգրկվելով տարբեր զբոսաշրջային երթուղիների կազմում՝ կնպաստի Արմավիրի մարզում տուրիզմի զարգացմանը: Միաժամանակ նախատեսվող կրթամշակութային, գիտահանրամատչելի լսումների և միջոցառումների միջոցով կօժանդակվի մարզային կրթադաստիարակչական վերելքին:

Արվեստի տուն-մշակութային ակումբի հիմնման ծրագրի համար նախատեսվում է վերակառուցել և հիմնանորոգել 300քմ (25մx14մ) ընդհանուր մակերեսով շինությունը (տես՝ հատակագիծը), որը բաղկացած է 3 հիմնական մասերից.

1) ***Ճակատային մաս - 12մx5մ=60մ^2 մակերեսով շինություն է, որը մի կողմից /12մ/ շփվում է փողոցին, որտեղ նախատեսվում է ճակատային մուտքը, իսկ մյուս կողմից՝ մեծ ցուցասրահին: Համաձայն ճարտարապետական նախագծի՝ անհրաժեշտ է տալ համապատասխան լուծումներ՝ ապահովելով կառույցի հարմարավետ, գեղեցիկ և ներկայանալի տեսքը:***
2) ***Կիսակառույց մաս - 9.3մx8մ=74.4մ^2 մակերեսով անավարտ կառույցը հանդիսանալու է մեծ ցուցասրահը: Սենյակի 2 պատերի շարվածքն ավարտված է, 3-րդ պատը պետք է ուժեղացվի /ամրացվի/, իսկ նախամուտքի մոտ գտնվող պատը պետք է ձևափոխվի՝ համաձայն նախագծի: Անհրաժեշտ է իրականացնել տանիքի կառուցման և ներքին հարդարման աշխատանքներ: Նախատեսվում է կառուցել նաև նկուղային հարկ՝ 60քմ մակերեսով, որպես գրաֆիկական աշխատանքների ցուցասրահ և հյուրասիրության վայր:***
3) ***Հարակից գտնվում է 2.5մx8մ=20մ^2 կապիտալ կառույցը, որը հանդիսանում է հաղորդակցման միջանցք երկու սրահների միջև:***

4) ***Գործող արվեստանոց-ցուցասրահ - 6.25մ x9.3մ=58.125 մ² մակերեսով, որտեղ այս պահին ցուցադրվում են 100-ավոր գործեր: Անհրաժեշտ է կատարել ներքին հարդարման աշխատանքներ և նորացնել ապակեպատ երդիկը:***
5) ***Խոլ - 3մx2.5մ=7.5մ²***
6) ***Պահեստասենյակ - 3մx7մ=21մ², որը հետագայում կարող է ծառայել որպես հյուրասրահ***
7) ***Նախամուտք՝ դեպի բակ տանող - 3մx2.5մ=7.5մ²***

Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է կառուցել շինության կիսակառույց հատվածը, կառուցել տանիքը որպես շինության մեկ ամբողջություն, փոխել պատուհանները, դռները, կատարել ընդհանուր ներքին հարդարման աշխատանքներ:

Ծրագրի արդյունքում ակնկալվում է, որ մարզի Արմավիրի տարածաշրջանում կգործի արվեստի տուն-մշակութային ակումբ և յուրօրինակ հանգստի վայր, որը կհանդիսանա կրթամշակութային և զբոսաշրջային զարգացման ուրույն կենտրոն:

1. Ներդրման նկարագրություն

1.1. *Ներդրման գումարը* ***24.0 մլն ՀՀ դրամ***

- Պահանջվող ամբողջ գումարը ***24.0 մլն ՀՀ դրամ***
- Սեփական ներդրում՝ ***12.0 մլն ՀՀ դրամ՝ շինվերանորոգման աշխատանքներ***
- *Այլ ներդրողներ*

1.2. Նկարագրել ներդրման տեսակը՝

- ***Նոր ձեռնարկություն***
- *Գործող ձեռնարկության ընդլայնում կամ աշխատանքների վերսկսում,*
- *Գործող ձեռնարկության վերապրոֆիլավորում:*

Նոր նախաձեռնվող ձեռնարկության /start up/ դեպքում նշել՝

- *Անվանումը* -***«Զարեհ Վարդանյան» Ա/Ձ***
- *Գտնվելու նախատեսված վայրը* -***ՀՀ Արմավիրի մարզ, Նորապատ համայնք, 5րդ փող. 54 տուն***
- *Սեփականատեր (սեփականատերեր)* - ***Զարեհ Վարդանյան***
- *Կազմակերպա-իրավական տեսակը* –***անհատ ձեռնարկատեր***
- *Տեղեկություններ ձեռնարկության տնօրենի վերաբերյալ՝ կոնտակտային տվյալներ* - ***Զարեհ Վարդանյան, հեռ. +37493633051***
- *Աշխատողների նախատեսվող թվաքանակ* -***5***
- *Ձեռնարկության նախագծային հզորություն:*

1.3. Ծառայության նկարագրություն

Նորաստեղծ արվեստի տուն-մշակութային ակումբը կհանդիսանա Արմավիրի տարածաշրջանում եզակի կենտրոն, որտեղ բացի նկարիչ Ս.Վարդանյանի նկարներից կցուցադրվեն նաև այլ նկարիչների գործերը, ինչպես նաև կկազմակերպվեն տարաբնույթ մշակութային, գիտակրթական միջոցառումներ՝ համերգներ, մեծարման և հուշ-երեկոներ, ինչպես նաև ազգային ուտեստների հյուրասիրություն:

2. Շուկայի ուսումնասիրություն

2.1. Ծառայության շուկայի նկարագրություն

Շուկայում բացակայում են նմանատիպ վայրերը:

Մշակութային օջախի դռները բաց կլինեն բոլոր այցելուների առջև, որոնց թվում են՝ պետական պաշտոնյաներ, տարբեր կրթամշակութային կոլեկտիվ խմբեր, զբոսաշրջիկներ և պարզապես քաղաքացիներ:

Ծրագրի իրականացման համար նպաստավոր են մի շարք հանգամանքներ.

1) արվեստի տունը գտնվում է Արմավիր քաղաքի հարևանությամբ՝ Մ-5 «Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման» միջպետական ավտոճանապարհի վրա,

2) հանդիսանում է էջմիածին-Սարդարապատի հուշահամալիր-Երվանդաշատ-Բագարան զբոսաշրջային երթուղու միջանկյալ օղակ,

3) գտնվում է Երևանից 44.3կմ և մարզկենտրոն Արմավիրից՝ 3.3կմ հեռավորության վրա:

2.2. Հիմնական սպառման շուկաների նկարագրություն

2.3. Հիմնական մրցակիցների նկարագրություն ***-մրցակիցներ չկան***

2.4. Պահանջարկի դինամիկան հիմնական սպառման շուկաներում

3. Ձեռնարկության մարքեթինգային քաղաքականությունը

3.1. Գովազդային և առաջմղման քաղաքականություն

Ակտիվ համագործակցություն գործընկերների, պետական, մարզային, համայնքային և միջազգային կառույցների հետ:

3.2. Տարածման ուղիները – ***բուկլետներ զբոսաշրջիկների և տուր-օպերատորների համար, ֆեյսբուքյան էջ, մարզպետարանի և այլ կայքեր, մասնակցություն տարբեր միջոցառումների և քննարկումների:***

3.3. Գնային քաղաքականություն – ***որակյալ ծառայություն՝ շուկային համապատասխան:***

4. Վաճառքի կանխատեսում

4.1. Վաճառքի ծավալներն արտահայտված ֆիզիկական և դրամական միավորներով, 5 տարվա կտրվածքով:

Վաճառքի ծավալները /նկարների և ստեղծագործական իրերի/ կախված են շբոսաշրջիկների քանակից և ազգաբնակչության սոցիալական վիճակից:

5. Ֆինանսական հաշվարկներ

5.1. Ինքնարժեքի հաշվարկ,

5.2. Ակնկալվող շահույթի կամ շրջանառության հաշվարկ 5 տարվա կտրվածքով,

5.4. Ներդրումների հետգնման ժամկետ

6. Ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը

- *Ձեռնարկության կամ ծառայության մատուցման ազդեցությունը մարզի կամ համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակի վրա,*

Ծրագիրը կնպաստի մարզում մշակութային տուրիզմի զարգացմանը և տարածաշրջանային մշակութային, կրթադաստիարակչական վերելքին, մեծաթիվ զբոսաշրջիկներ կայցելեն մարզ, որը ևս մեկ անգամ կբարձրացնի մարզի և հանրապետության հեղինակությունը:

- *Նոր ստեղծված աշխատատեղերի քանակը* ***-5***
-

7. Պետությունից կամ այլ ներդրողից ակնկալվող օժանդակություն և պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն

- ***Հարկային արտոնություններ,***
- ***Վարկավորում՝ ցածր 3% տոկոսադրույքով***
- ***Փոխառություն, առանց տոկոսադրույքի, 5-6 տարի մարման ժամկետով***
- ***Դրամաշնորհի հնարավորություն:***

Φnηηg